ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

---

Թիվ 79
12 .12.2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ՝
Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում Հայկավան համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 28-ին կայացած թիվ 11 նիստի Հայկավան համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին որոշումը:

Առդիր 7 թերթ

Համայնքի ղեկավար Մ. Գևորգյան

1188/-11
12 12 2011 г.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ

28 նոյեմբերի 2011թ. N 11 նիստի
N 1 որոշում

### ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 12 –րդ հոդվածի 4-րդ մասով.

Որոշում է

1. Հաստատել Հայկավան համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Հ. Եղիազարյան ..........
Ս. Զաքարյան ..........
Ռ. [illegible] ..........
Ս. Սարգսյան ..........
Ռ. [illegible] ..........
..........
..........

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2011թվականի
նոյեմբերի 28– ին
գ. Հայկավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Հայկավանի
գյուղական համայնքի ավագանու
2011 թվականի նոյեմբերի 28-ի
N 11 նիստի N 1 որոշման

# ՕՐԱԿԱՐԳ

| | |
|---|---|
| 1. Հայկավան համայնքի ավագանու թիվ 11 նիստի օրակարգը հաստատելու մասին: | Մ. Գևորգյան համայնքի ղեկավար |
| 2. Հայկավան համայնքի 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին: | Մ. Գևորգյան համայնքի ղեկավար |

# ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

***Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի ավագանու կողմից ընդունված իրավական ակտի նախագծի օրինականության և հիմնավորվածության ստուգման մասին***

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի ղեկավար Սամիկոն Գևորգյանս, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ստուգեցի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 28-ի «Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերի հաստատման մասին» N 02 Ն որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ստուգմամբ պարզեցի, որ տվյալ ակտի ընդունումը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջով:

Ակտի ընդունումը ուղղված է տեղական տուրքերի և վճարների գանձումների միջոցով համայնքի բյուջեն հզորացնելուն և համայնքի զարգացմանը նպաստելուն:

Ելնելով վերոգրյալից՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 28-ի «Հայկավան համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թնականի դրույքաչափերի հաստատման մասին» N 02 Ն որոշումը համապատասխանում է գործող օրենսդրության պահանջներին:

Համայնքի ղեկավար՝ Ս. Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# ՈՐՈՇՈՒՄ

8 նոյեմբերի 2011թ. N 11 նիստի

N 2-Ն որոշում

## ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

…եկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության …րենքի 16-րդ հոդվածի 1 ին մասի 18-րդ կետով:

Որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավանի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

…ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

…ՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N 02 Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել `հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հիգ հարյուր/ դրամ.

բ) սույն կետի ,ա« ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար /դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ,

բգ) 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 /երեսուն հազար/դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000/մեկ հազար/ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների ( այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/հինգ հարյուր /դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության

փոփոխություն, ապա, բացի սույն կետի ,ա ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/դրամ:

:4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում `յուրաքնչյուր եռամսյակի համար՝ 3000/երեք հազար/ դրամ

2)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 /երեք հազար / դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000/մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:

6 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 դրամ:

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 35 000/երեսունհինգ հազար /դրամ.

) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000/հիսուն հազար / դրամ.

) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 / երկու հարյուր հազար /դրամ:

) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 / հինգ հարյուր հազար / դրամ:

շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար /դրամ:

վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000/մեկ հարյուր հազար / դրամ:

Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու ույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք վազդող արտաքին գովազդի համար՝ 2000/երկու հազար/ դրամ.

թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) տադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500/երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

այլ արտաքին գովազդի համար՝ 1000/մեկ հազար / դրամ:

դ) ծխախոտի արտաքին գովազդի համար` 3000/ երեք հազար/ դրամ:

ե) դատարկ գովազդային վահանակների համար` 700/ յոթ հարյուր/ դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար / դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000/հինգ հազար /դրամ:

11. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/դրամ:

12. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000/մեկ հազար/ դրամ: